



ԲԱՅ
ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՅ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2023-2024

Մաթեմատիկա (6-րդ դասարան)

Անուն Ազգանուն _____

Դպրոց _____

Դասարան _____ Խումբ _____

Մաթեմատիկան թագուհին է բոլոր գիտությունների...

Կ. Գառու

Մաղթում ենք հաջողություն:

1. Բազմապատկել են 11-ից մինչև n բնական թվերը: Արդյունքը մի բնական թիվ է, որը վերջանում է 29 զրոյով: Գտի՛ր n բնական թվի հնարավոր արժեքները: (4 միավոր)

2. Օլիմպիական խաղերին մեկնած պատվիրակության մարզիկների միջին տարիքը 22 է, իսկ մարզիչներինը՝ 47: Պատվիրակության n ը տոկոսն են կազմում մարզիչները, եթե ամբողջ պատվիրակության միջին տարիքը 41 է: (4 միավոր)

3. Մի դպրոցի 91 աշակերտներ որոշեցին գնալ կինո: Անցյալ տարի նրանք կտեղավորվեին կինոթատրոնի 8 շարքերում (բայց ոչ 7-ում): Սակայն այս տարի յուրաքանչյուր շարքի ամեն չորրորդ նստատեղը (այսինքն՝ յուրաքանչյուր նստատեղ, որի համարը բաժանվում է 4-ի) պետք է դատարկ մնար, ուստի մեկ աշակերտ կինոդահլիճում չի տեղավորվի: Քանի՞ շարք կա դահլիճում և քանի՞ նստատեղ յուրաքանչյուր շարքում, եթե բոլոր շարքերում նստատեղերը հավասար են: (4 միավոր)

4. Տղան թղթին գրեց 17-ին բազմապատիկ թիվ և ջնջեց վերջին թվանշանը: Ստացված թվից հանեց ջնջած թվանշանի հնգապատիկը: Տղան պնդում է, որ ստացված արդյունքը կրկին բաժանվում է 17-ի: Արդյոք ճիշտ է տղան: Պատասխանդ հիմնավորի՛ր: (4 միավոր)

5. 3-ից 11 թվերը դասավորի՛ր շրջաններում այնպես, որ մի ուղղի վրա գտնվող յուրաքանչյուր երեք թվերի գումարը հավասար լինի 24-ի: Պատասխանդ ցո՛ւյց տուր նկար 1-ի վրա: (4 միավոր)

